

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 ծր.

Վեցամսեայ 6 ծր.

ԱՐՏԱՍՍԱԶՄԱՆ

Երկու քիւր մէկ ծրարով

Տարեկան . . . 14 ծր.

Վեցամսեայ . . . 7 ծր.

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 ծրար

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ

Իրանցման սուղը
20 սանթիմ



ԻՐԱՆԻՈՒՆ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՈՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՒԵՔԵՄԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rédaction journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

ИРАВУНКЪ

ВАРНА

Կրօնքոչիւնք եւս լիկ
տրոշիր

ՁԵՌՆԱՐԿԸ ԵՂԱԾ Է



Ֆրիլիպէի մեր նոր պաշտօնա-
կիցը «անմիջական ձեռնարկը»
խորագրին տակ հաճած է Պուլ-
կարահայոց առաջնորդական հար-
ցը յուզել այն եղանակաւ և այն
նպատակով ինչ որ մենք ըրինք
ասկէ վեց ամիս առաջ և գործը
եկաւ հասաւ հոն, ուր, բացի Ռուս-
չուքի թաղականութենէն, բոլոր
պուլկարահայոց հաճութիւնը առ-
նուած է՝ Վառնայի թաղ. խորհր-
դոյ միջոցաւ ուղղակի վեհ. Կա-
թողիկոսին դիմելու, խնդրելով
որ ինք կարող եկեղեցական մը
ըրկէ Պուլկարի առաջնորդական
վիճակ մը կազմակերպելու հա-
մար:

Մեր նոր պաշտօնակիցը ան-
տեղեակ քանի մը ամիս առաջ
անցած դարձածէն, կառաջարկէ
գործը Ա. Բ. Գ. Է. սկսիլ, ու կը-
սէ «պէտք է որ Պուլկարիոյ բո-
լոր կարեւոր քաղաքներուն մէջ
մէկ մէկ հանրագիր պատրաստուի՝
ժողովրդային բոլոր դասի մաս-
նակցութեամբ, ուղղուած Ն. Ս. Օ-
ժութեան, պահանջելով որ Պուլ-
կարիոյ վիճակը անշատուի Պուլ-
սոյ Պատրիարքութենէն և Կա-
թողիկոսական փոխանորդ մը
ըրկուի հոս անմիջականօրէն կամ
անհրաժեշտ դիւրութիւններ ըն-
ծալուին՝ Առաջնորդի մը ընտրու-
թեան »:

Ժողովրդային դասերու մէջ նոր
բօրականտի և հանրագրութիւն-
ներու պատրաստութեան երբեք
պէտք չէ մնացած. խնդիրը և-
փուած, հասունցած և եկած է
արդէն այն կէտին որ Վառնայի
թաղ. խորհուրդը Պուլկարիոյ տա-
սը հայաբնակ քաղաքներու ու-
թիւն հաճութիւնը պաշտօնական
նամակներով իր ձեռքին մէջ ամ-
փոփած, պատրաստ է այսօր, ի
դիմաց Պուլկարահայութեան 3/4
մասին, դիմելու վեհ. Կաթողի-
կոսին, խնդրելու որ ինք նշանա-
կէ ուղղկէ մեզ կարող եկեղեցական
մը:

Այս կարեւոր դիմումին մինչև

ցարդ եղած չըլլալուն պատճա-
ռը երկուք է՝ մէկը այն է թէ
Ռուսչուքի և Սիլիստրէի թաղ.
խորհուրդներուն ևս պատասխանը
առնելու համար ամիսներ ի զուր
անցան. երկրորդ. որ, 2—3 ա-
միսներէ ի վեր Կողկասի մէջ
տիրող արհաւիրքը և հողորդակ-
ցութեանց խզումը սպասողական
դիրքի մը հարկադրեցին մեր
թաղականութիւնը. եւ այսօր ա-
պահով ենք թէ սա ժողովրդային
բազմանքին վրայ իր ստանձնած
նախաձեռնութիւնը գլուխ պիտի
հանէ քիչ օրէ երբ հաստատէ թէ
Կողկասի թղթատարական հա-
ղորդակցութիւնները վերահաս-
տատուած են և վեհ. Կաթողիկո-
սը Ս. Էջմիածին վերադարձած:

ԿՈՎԿԱՍՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ հասնող Կովկասահայ լը-
րագիրներէ [15 յունվար թուով]
կը տեղեկանանք թէ վեհ. Կա-
թողիկոսը տակաւին Տփլիս գտնու-
ւելով, իր անուանակալութեան
տօնին առթիւ շնորհաւորական
այցելութիւններ ընդունած է:

—Նախընտանէն Տփլիսի ա-
ռաջնորդին կը հեռագրեն թէ
այդ գաւառի նոր գիւղէն յիսուն
հայ մեռած և շատեր վիրաւոր-
ւած են. Հարկահաւաքները տուր-
քի համար շատ կը նեղեն և ար-
դէն թալանուած ժողովուրդին
վերջին վերմակն ալ կառնեն.
Թուրքերը նահանգապետէն օգ-
նութիւն կը ստանան:

—Անգեղակաթ հայ գիւղին
վրայ 700 թուրքեր յարձակե-
ր են թուրք ոստիկանի մը առաջ-
նորդութեամբ, և 200 ի չափ տը-
ղայ կին, աղջիկ կոտորե-
ր են. բայց փոքրիկ հայ խումբ մը վը-
րայ հասնելով, 6 թուրք սպան-
ներ ու միւսները փախցուցեր է:

—Գանձակի կայարանը, կիմա-
ցուի թէ, գրաւուած է զինեալ
թուրքերու խումբով. նոյնպէս
այդ քաղաքի հեռագրատունը
թուրք պաշտօնեաներու ձեռքն է

մնացան, որովհետեւ նամակա-
տան և հեռագրատան բոլոր հայ
պաշտօնեաները արձակուած են:

—Ուզունթալա զրկուած հա-
րիւր խաղախները ճամբան ետ
գարձած են, ըսելով թէ Հայերը
խմբովին հրացաններ սկսեցին
արձակել իրենց վրայ. Բայց այդ
խաղախներուն հետեւող Մալա-
կաններու վկայութիւններով հաս-
տատուեցաւ թէ ոչ մէկ հրացան
չէ արձակուած:

—Պաղուէն յունվար 10 թուա-
կանով կիմացնեն թէ, Շուշի և
չըջակներու հայ-թրքական
խառնակութեանց պատճառաւ
տեղւոյն թուրքերը կրկին խիստ
գրգռուած են. ամեն վայրկեան
յարձակումի կը սպասուի. Կրսուի
թէ թուրքերը ընդհ. նահանգա-
պետին դիմե-
ր են նոր կոտորած
սկսելու համար, ինչպէս օգոստոս-

սին, բայց նահանգապետը սպառ-
նացած է նախադարձակ եղող կող-
մին. Թուրքերը Պարապետ հրա-
պարակին վրայ դիրքեր բռնեցին

—Գանձակէ կը հեռագրէ Ռուս
գործ. յունվար 12 ին թէ զինու-
որները չեն պատժեր իրենց
խնամքին յանձնուած անգէն
հայ ճամբորդներու վրայ կրակ
ընող թուրքերը, իսկ Շուշի գիւղը
Դաշուշէնը կը ռմբակոծուին զօ-
րավար Գօլշտայնի ձեռքով, ո-
րովհետեւ այդ գիւղերը յարձա-
կած էին Շուշի քաղաքի սովեալ
մահմետականներուն համար ու-
սեստ փոխադրող սայլերուն վը-
րայ. Հայերը Ղաջար գիւղի վը-
րայ յարձակեցան, կռիւ կը շա-
րունակուի. Զօրավար Գօլշտա-
պովի զօրքը այսօր Շուշի մեկ-
նեցաւ ահագին մթերքով:

ԱՌԸՆԿԵՐՆ



Դէ՛, վեր կա՛ց ընկեր, օրն է լուսացեր
Մենք շարունակենք մեր բռնած ուղին.
Արտոյտն էլ վաղուց է քնից վեր կացել՝
Թողնելով թաւշեայ կանանչ անկողին:

Սար ու ցոր հովիտ ուր կեանք են առել
Կարմիր արեւի ոսկեհուն շողքից.
Միայն մեզ համար է կեանքը սառել
Մեր անհուն վշտի ծովացած ցաւից:

Լսեցի՞ր արդեօք՝ թէ ինչպէս բարձրում
Արտոյտը իւր քաղցր նուազը հնչեց.
Եւ սիրոյ ողջոյն առած բերանում
Անդրանիկ երգը բնութեան ձօնեց:

Մենք էլ կերգէինք քաղցր նուազով
Մեր սիրոյ երգը բնութեան գրկում,
Բայց մեր կեանքը լի է արցունքով—
—Ուրախ երգի տեղ՝ խոցը մեր կրծքում:

Դէ՛, վեր կա՛ց ընկեր, արեւը բարձրացաւ
Բռնենք մեր ուղին, քանի դեռ օր կայ.
Արգիլի շողքից օդը տաքացաւ.
Մեր կորցրած ոյժը նորից ետ կուգայ:

Շուտ արա՛ ընկեր, մեր բեռը ծանր է,
Մինչև երեկոյ տեղը պիտ հասնինք.
Մեր ճանապարհը փշոտ ու նեղ է,
Է՛լ ձեռքդ առ ցուպը, մեր ուղին բռնենք:

Տե՛ս ահա հեռում մի կէտ է փայլում,
Այնտեղ պիտ հասնինք արեւի լուսով.
Դա մեր կայանն է ու մեզ սպասում,
Ե՛լ տեղը կը հասնինք մեր վառ յոյսերով:
Ի ձե՛սՄԱՆ

ՍԻԼՈՒԱՆ

50 ՄԻԼԻՕՆ ՍՈՒՐԵՐ

ՊԱՏՐԱՍՏ

ԿՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԻ ԿՈՎՈՐԴՆԵՐԻՆ

(Շար. Նախորդ թիւէն եւ վերջ)

Հազուագիւտ հմտութեամբ եւ քաղաքագիտութեամբ օժտուած այս մարգարէն սակայն, իրա հզօր շարժման տուել է մի այնպիսի ուղղութիւն, որ ամբողջ հիւսիսային Ափրիկէում թուրք պաշտօնատարներին հետ կողք-կողքի քաղաքներէն իրա Մուգաթեմներն ու վեթիկները առանց միմիանց չփոխելու:

Մարգարէի պայտը չըջապատուած է գաղտնիքի մի անթափանծելի քողով: Այնքանիւմ եւ թունիսում գտնուող ֆրանսական կառավարութեան ամենակարող եւ հմուտ մարդիկներն իսկ չեն կարողանում հասկնալ թէ ինչ է դառնում իրանց շուրջը: Զննումներն ու կաշառատութիւնները հաւասարապէս մնացել են ալ ապարդիւն:

1898 ին Պրն. Արդիւր Սիւլվի վիթ փորձում է գնալ «Թէոֆիլ» բայց Մայրաքաղաքից 120 մղոն հեռու գտնուող Սէվաում քաղաքական մահն սպառնում եւ նա ստիպւում է դառնալ ետ: Այս եղբայրակցութեան կենտրոնական նշանաբանն է՝ «Վերջապահութիւնը կը յայտնէ գաղտնիքը»: Թէ-եւ սիրական բարոյականութեան խիստ պաշտպան եւ բռնաբար, նրանք աշխատակցում են գեղեցիկ եւ դիմաւոր կանանց, հաւատքը տարածելու գործում:

Դարձեալ, թէ եւ ի-Սէնիւսն ու սոցանում է կատարի եւ անգործ առեւտրութիւն դէպի անհատները, Գրիստոնեաները, եւ բոլորին պատրաստուում նրանց ջնջելու: Միւս կողմից նա հրահանգում է իրա գործակալներին չփոխել քրիստոնեայ պաշտօնատարներին հետ, շահել նրանց, եւ նոյն իսկ մտերմանալ, գաղտնիք առնելու համար: Միջերկրականի մէջ մի նաւահանգիստում, նոյն իսկ քրիստոնեայ աշխարհի իւրաքանչիւր առաջնորդող մայրաքաղաքներում նա ունի

իրա լրտեսներից եւ քահանաներից:

Այս եղբայրակցութեան նշանաբանում հաւասարութիւն է տրուած թէ եւ պահանջում է լուս եւ անպայման հնազանդութիւն դէպի գլխաւորները: Սրբանք ունին խօսքերի եւ նշանների մի օտարոտի օրինակները եւ իրանց մողովներն ու բանակցութիւնները անուամբ են այս խորհրդաւոր նշաններով: Այս եղբայրակցութեան պատկանող մէջ մի անհատ պարտի Մեծ Գանձարանին տալ 2 ու կէս առ հարիւր տոկոս, կամ տուրք բոլոր իրա ունեցած հարստութեան, բացի 21 Տօլարից որը հարկազեկ է համարուում: Իսկ տեղի աղքատ դասակարգը մասնակցում է գործին Անպատեհներում կամ Օվասիսներում աշխատելով, եւ կամ լըրտեսելու, թունաւորելու եւ սպանելու պաշտօն ստանալով:

Բացի իրա Մօքատիմ կամ քահանաներին, որոնց հետ տարին մէկ խորհրդակցում է, մարգարէն իրա հետեւողներին առանց քողի երբեք չէ երեւցել:

«Թէոֆիլ»-ի, մարգարէի նախկին Մայրաքաղաքը, մեծ մենաստանում շարունակ երկու հազար ուսանողներ էին մարզուում, կրթուում եւ ինչու-ժարողներ: Ամեն կողմ հիմնուել էին անագին գործարաններ եւ շտեմարաններ եւ պատրաստուում գէնք ու ռազմամթերք: Ուղտերի վիայով Արաբիայի բոլոր կողմերից, կենտրոնական Ասիայից եւ Հիւսիսային, կենտրոնական եւ Արեւելեան Ափրիկէից շարունակ գէնքեր էին տարուբերում:

Ամենից խորհրդաւորը այն է որ ի-Սէնիւսին «Թէոֆիլ» պատմում պահում էր 5 հազար ուղտեր կազմ եւ պատրաստ: Ի վերջոյ, որովհետեւ «Թէոֆիլ» Միջերկրականից հեռու էր միայն 150 մղոնով եւ անիծուած Անգլիան եղբայրութիւն, իսկ Պրանսան թունիսից սպառնում էին եղբայրակցութեան սրտին, ի-Սէնիւսին սրանից հինգ վեց տարի առաջ փոխադրուեց «Թիֆու» Օվասիսի «Թօքթօ» քաղաքը, ուր նա կարող լինէր իրա աշակերտներին կրթել ու գինել, եւ ընդարձակ շտեմարաններ լեցնել գէնքով ու ռազմամթերքով ու հրետա-

նիներով առանց խանգարուելու եւ րոպական մեծ ուժերից:

«Թիֆու» ի հետաւորութիւն է նէլ-ից (նեղոս) 500 մղոն, իսկ Միջերկրականից էլ աւելին: Այս տեղում մարգարէն չըջապատուելէ անսահման օտարամեծ անապատով, ուր ջրհորներ կարելի է գտնալ 70-80 մղոն հեռաւորութեան վրայ միայն, իսկ ճանապարհներին միայն ծանօթ են միայն հմուտ տաղանդներ, որոնք աւելի պատրաստ են կրել հարիւրաւոր մահերի տանջանք, քան իրանց տէրը մտնել: Այնտեղ այս քաղաքի ի-Սէնիւսն մտածում է եւ գործում մինչեւ կ'իջի պատրաստ յայտարարելու «Թէ-հատ» կամ Սուրբ պատերազմը, որը պիտի ջախջախէ քրիստոնէութիւնը ու արիւնով ողողէ ամբողջ աշխարհը:

Այնքանիւմ, թրիքից, թունիսից եւ Մարոկկոյից դուրս գնացող նրա միսթնարների թիւը տասնեակ հազարներ է հասնում, բազմաթիւ քահանայապետներ ամեն օր զայիս են Մեծ Սահարան ընտրող այս խորհրդաւոր Օվասիսից:

1883 թուականներին ըստ Մ. Տիւլեֆիէի հիւսիսային Ափրիկէում, եղբայրակցութեան թիւը հասնում էր տասն եւ ինը միլիոնի: Իսկ այսօր թէ նրանց թիւն է անհամեմատ բազմապատուել եւ թէ Սահարան ընդարձակուել: Ի-Սէնիւսին այժմ բազմաթիւ հետեւողներ ունի ամեն այն տեղ ուր Մահմետականութիւն կայ, եւ թողել մի այնպիսի խոր տպաւորութիւն, որ իրա անուան յիշուած է աղօթքի ժամանակ, փորձանակ Մուհամմէտինը: Նոյն իսկ ընտանի կենդանիները դրօշմում են Արաբներէն մի տառով որը նրա, ի-Սէնիւսին խորհրդանշանն է:

Ի-Սէնիւսին առաջին նպատակն է մաքրել Ափրիկէն Անգլիացիներից ֆրանսացիներից եւ այլ անհուստներէրից: Երբեք չի կարող հարիւրաւոր կէտերից ինչպէս անապատներից, հիւսիսային ընդարձակ երկրներից, անառիկ մի մի երբեք, որոնց առջեւ եւրոպայի բոլոր բանակները իմի հաւաքած ոչինչ են:

Նույն, որ ամբաստանաւալներուն հետ կը գտնուի, բերուեցաւ ու հարցաքննուեցաւ: Մանուկ տաղանդ անգամ ուրաջաւ խնդրել, բայց ժողովի հետ դէմ առ դէմ բերուելով խոստովանեցաւ եւ ըսաւ թէ Գարի եւ Վանուվիլի՝ այսինքն կարապետ Անտ, Թրասա եւ Վանուվիլի՝ այսինքն Արտաշ Թորգոմ, Վանուվիլի՝ Բէնտարեանի եւ հիմա ամբաստանաւալներուն մէջ գտնուող եւ երբեմն խահարար ու յետոյ Պայպլի Հաւաքի շրջուն գրավածաւ եղիա Գահվէճեանի միջոցաւ «Գրոյակ» քաղաքին մէջ մանկելով յանձն առել է քաղաքի մեծ տեսակի բաղձանքները ու Կործողութիւնները կատարել: Նաեւ նոյն քաղաքին պատկանողներուն թիւը աւելցնելու ջանալով, քաղաքին մէջ մտցուցեր է ամբաստանաւալներուն մէջ գտնուող իշխմէճի երուանդը, ծանօթ կառապան Մկրտիչի եղբայրը Յովհաննէս, քաղաքի՝ Յովսէփի, խահուէճի նշան, փախստական կոչկալար Արշակ, քաղաքային բժշկական վարժարանին ուսանողներէն ըլլալով, նոյն վարժարանէն հետագած Յովհաննէս, Մանուկ յարեց թէ առողջ «Գրոյակ» լրագիրը կարգադրել տուել, նոյն խանին սենեակին մէջ անոնց

Այսօր յաճախակի կարաւաններ կըտրուում, խնցնում են Մեծ Սահարան կրելով Ամենակարողին գէնք եւ ռազմամթերք, ինչպէս նաեւ գաղտնի աղետներից գաղտնի պաշտօնագրերը թանկագին ընծաներ եւ նուիրուած հետեւողներ:

Բացի այն որ ի-Սէնիւսին Այս-խարհի բոլոր կողմերում ունի աշխարհ ու ականջներ, ինքը եւ իրա հետեւողները ունին նաեւ մտային հետաքրի թագուն մի գիտութիւն եւ կարողանում են ուղարկել պատգամներ մեծ հեռաւորութեան: Մի միջոց որը գիտութեան դեռ եւս անծանօթ է:

Անկո—Պոնրեան պատերազմի ժամանակ ի-Սէնիւսին քաղաքին յուր էր ստանում ինչ որ կատարուում էր այնտեղ: Այսպիսով զարմանալի չէ եթէ Ափրիկէի 100 միլիոն բնիկները ոգեւորուին նոր ոգով: Իրոքէն կապուել են միմեանց բոլորովին այլազան ցեղեր, ինչպէս ճարպիկ եւ ազատասէր «Սոմալ»ները պատերազմիկ «Մասէ»ները հիւսիս արաբ թափառաշրջիկները, հանգստասէր եւ հեշտասէր «Ատամաւէս»ները, ինչպէս նաեւ Սինեկամպիա պատուաւորագարիկ նեկրոները:

Այն օրը հէնց որ ի-Սէնիւսին կըտայ կայծը, պիտի բռնկուի ամբողջ Ափրիկէան աշխարհը, սրան անմիջապէս պիտի հետեւեն եւ Արաբիան, ամբողջ թուրքիան եւ Հնդկաստանը: Թէ ինչպէս դէմ գնել այս սարսափելի շարժման, ո՛չ մի քաղաքակրթ պետութիւն է իմանում: Պրանսան անկարող է մի մեծ բանակ սպառել Ափրիկէում, որովհետեւ վախենում է Գերմանիայից, իսկ օրա Ափրիկէի կարեւորները չարժեն պաշտպանել: Փորթուգալը փող չունի եւ այսպէս ալ ամբողջ բոլոր ծանրանում է Անգլիոյ վրայ, որը այդ տեղերում ուժ չունի եւ մի բոլոր հողագործ Բոսնիներին նուաճաւու համար կորցրեց 300.000 մարդիկ:

Հասնել է ժամանակը տոյն փողի հնչման որի ձայնից պիտի յարձակու-

ՍՈՒԼԹԱՆԸ ՍՊԱՆՆԵԼՈՒ

ՓՈՐՁԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

(Արտատպուած «Արեւիկէ»-էն)

(Շար. Նախորդ թիւէն)

ԸՆԴ. ԴԱՏԱԽԱՉԻՆ ԺԱՌԸ

Սինկէրի վաճառատան մէջ ժողովի գրասեղանէն գտնուած թուղթերուն մէջ երեւան հանուած տետրակի մը պարունակութիւնը քննուելով, արձանագրութիւն մը տեսնուեցաւ թէ Մանուկ անուն անձի մը տասր ոսկի տրուած է: Հարցուեցաւ ժողովի թէ այդ անձը ո՞վ է, սակայն ժողովի ուրաջաւ եւ չը պատասխանեց: Գննութիւն կատարուելով հաստատուեցաւ թէ ծանօթ կառապան Մկրտիչի հաւմաքաղաքացիներէն Մանուկ անուն անձ մը Բերայի ձօնա արարելուան մէջ իբրեւ գնապան կը ծառայէ եւ թէ Սիւլվի Ռիչի կամ Վահանի զիմուսին վրայ Մանուկ կատարած է վերջերս Մկրտիչի իր ծրննաւորութիւնը: Սիւլվի Ռիչի գործողութիւնները ու թղթակցութիւն-

ները: Հետեւաբար հասկցուեցաւ որ ժողովի տետրակին մէջ անունը արձանագրուած այդ Մանուկը այն անձն է որ Մկրտիչի բերուելուն միջնորդած ու վահանի հետ տեսակցած է: Գննութեանց այս արդիւնքին վրայ նորէն տեղեկութիւն պահանջուեցաւ ժողովէն, որ ըսաւ թէ քննութեամբ երեւան բերուած Մանուկը՝ տետրակին մէջ անունը արձանագրուած Մանուկն է, թէ վերագրեալ տասը ոսկին Լիւրարիս յանձնուած է իրեն Սիւլվի Ռիչիի տրուելու համար եւ թէ ինքաւ Մանուկի տուած է եւ թէ այդ անձը եպիսկոպոս անձանց հետ խոստովարարական յարաբերութիւններ ունի: Ժողովի յայտարարեց նաեւ թէ Ռիչի միայն յարաբերութիւններ ունէր Մանուկի հետ: Բայց անուն մէկին հետ եւ թէ օր-մը իր կը խօսուէր Աւստրիոյ հիւանդանոցին մօտերը գրտնուած տուն մը պահուած «մէլի-նիթ»ները անկէ հանելու վրայ ժողովի յայտարարեց թէ պատրաստ է ծառայելու իր կինը Աննա Նէլ լէնսը զրկելով եւ կամ անձամբ երթալով, բայց Սիւլվի Ռիչի ըսեց թէ այդ գործը Մանուկ ալ կրնայ կատարել: Ասոր վրայ նախ ձօնա արարելուան դժուարութիւնը Սիւլվի Ռիչիի զոհարարութիւնը:

հետ խոստովարարական խորհրդակցութիւններ կատարած եւ վերոյիշեալ անձանց իւրաքանչիւրը զանազան աստիճանով քննութիւն գործողութեանց մէջ ծառայել տուած է: Նաեւ միւս կողմէ նպաստ հաւաքելու ձեռնարկած է եւ թորգոմի յանձնարարութեամբ «Ա. Օ. Ժորժ» հասցէն պատրաստուելով, այդ հասցէով «Գրոյակ» խոստովարարական լրագրին լրագրութեւ օրինակները բերել տուել եւ թորգոմի հետ զայն հրուել է: Մանուկ յարեց թէ եղեռնական դէպքէն տեղեկութիւն ունի, եւ թէ զէպքէն տուած, թորգոմ, Մկրտիչ ու Սիւլվի Ռիչի՝ այսինքն վահան իրեն բերել են մեծ բազմութիւն մը մէջ գրտած հրանիւթեր: Կտուցեց մէկ մասը թորգոմի զեկոյցովը գրավածաւ եղիայի ու խանուէճի նշանի յանձնելու: Գնացած մասը, Մկրտիչի քեռորդին՝ Յովսէփի միջոցաւ վահանի կողմէ գրուած տասնութինգ հատ «մէլի» ու պարապ «պօպա»ները բնորոշներ է, սակայն վախնալով զայն նետեր է արարելուան ջրհորին մէջ: Իսկոյն ձեռնարկուեցաւ ձեռնարկուելու Մանուկի այն եպիսկոպոս ընկերները որոնց անունները յայտնած էր: Միւս կողմէ նոյն արարելուան ջրհորին խոստովարարութեան ալ ձեռնարկուեցաւ:

ւին 50 միլիոն ֆանատիկներ Բրիտանիայ տիեզերքի վրայ : Երեսու մէկ որ ա՛յո՛, եւ չարաչուզ լուրը յայտարարեց հէնց ինքը Տաճկաց Սուլթանը սրանից մի քանի շաբաթ առաջ : Թարգմ. «Չիխլի-Ամերիկան» օրաթերթից

ՍՏԵՓՈՆ Մ. ԾՈՑԻԿԵԱՆ
ՉԻԿԼՈ

ԿՈՒԿԱՍԻ ԶԱՐԴԵՐԸ

Ռուս կառավարութեան հայերը մեղապարտ հռչակող կէս պաշտօնական հաղորդագրութեան ի պատասխան հետեւեալ հերքումը հրատարակութեան տուած է Օր. Ալիս Սթօն Պլաքուէլ ամերիկեհի բանաստեղծը .

Խմբագիր Թրանսֆրիքթի

«Հայերը մեղապարտ են» խորագրով Ռուս կառավարութեան «կիսապաշտօնական» հաղորդագրութիւնը ձեր ընթերցողներէն շատերը զարմանքով տեսած կըլլան երէկ իրիկուան թրանսֆրիքթի մէջ, որով կը յայտարարէր թէ Կովկասի վերջին կոտորածները քանի մը տարիներ առաջ թիւրքերը մէջ տեղի ունեցած կոտորածներու կրկնութիւն մէկն, եւ թէ երկու պարագային ալ Հայեր մեղաւոր են, մահմետականները գրգռած ըլլալով որ զերենք կոտորեն :

Այս հաղորդակցութեան հեղինակը կը կարծէ որ Ամերիկացիներս շատ բուրժիւզիոյթիւն մ'ունինք : Մենք մոռցած չենք որ թիւրքերը մէջ կատարուած Հայկական կոտորածները ջախջախիչ փաստերով ապացուցուցան, որ թիւրք կառավարութիւնը ծրագրեց եւ գործադրեց իր ազատ կամքով : Այժմ տեսնենք թէ՛ վերջին կոտորածները Ռուսաստանի մէջ կառավարութեան մասնակցութեամբ կատարուեցան թէ ոչ :

Ինչէ՛լի կոտորածի առեւն ոչ մի բան անքան վատ տպաւորութիւն չի թողուց Սմերիկայի ժողովրդին վրայ, որքան այն իրականութիւնը, որ Ինչէ՛լի առաջնակարգ թիւրքը թոյլատրուած էր, կառավարական գրաքննական հսկողութեամբ չաթաթներով, զրգռել քրիստոնեաներ որպէսզի կոտորեն հրեաներ, եւ այն որ կոտորածէն յետոյ այդ թիւրքը կառավարութիւնէն խոշոր գումար մը նպաստ ընդունեց : Նոյնպէս թաթաթներու Հայերը կոտորելէն ամիսներ առաջ, Կովկասի առաջնակարգ թաթար լրագիրը կառավարութեան գրաքննիչի հսկողութեան տակ, բացօթէն կը զրգռէր թաթարներ՝ կոտորելու Հայերը : Փողոցներու մէջ «Կոտորելէք Հայեր» խորագրով յայտարարութիւններ ցրուած էին : Միեւնոյն ատեն ոստիկաններ ու զինուորիկներ զինաթափ ըրին Հայերը, մինչ թաթարներուն թոյլ տուին իրենց հրացաններ պահելու եւ եղան պարագաներ ալ, որ անոնց զէնք բախիկներն, երբ կոտորածն սկսաւ, կառավարական պաշտօնականներ, զինուորիկներ ու ոստիկաններ կանգնեցին ու նայեցին առանց երբէք ձեռք մ'անգամ բարձրացնելու պաշտպանելու համար զոհերը :

Կրաքննիչի ձեռքէն անցած հեռագրական լուրերը, խռովութիւններ կը համարէն որպէս կրօնական ու ցիղային թշնամութիւններ Հայերի ու թաթարների մէջ, կամ անտեսական կոնք գործարանատիրոջ ու գործաւորներու մէջ, եւ յայտարարուեցաւ որպէս թէ տեղական կառավարութիւնը անկարող կը դառնէր կարգը վերահաստատելու : Պագուի պատուաւոր քաղաքացիներ հաւաքաբար յայտնած են իրենց կարծիքը կոտորածներու մասին :

Պագուի փաստաբաններու համագումարը հետեւեալ որոշումները անցուց՝

«Պագուի օրէնսդէտներու համագումարը մէկտեղ գալով քննելու վերջին քանի մը շաբաթներու սոսկալի ղեկավարի պատճառը, հասցած է եզրա-

կացութեան թէ՛ կոտորածները Հայերու եւ թաթարներու կրօնական կամ ազգային թշնամութեանց հետեւեալ չէր, եւ ոչ ալ տնտեսական զիմամարտի. անոնք տեղի ունեցան բացարձակապէս քաղաքական ու զինուորական իշխանութեանց յայտնի զրգուժով, եւ որոնց աչքին առաջ չորս օր մարդասպանութիւն, կողոպտում ու այրում տեղի ունեցաւ եւ ամբողջ ընտանիքներ ողջ ողջ այրուեցան :

Քարեղի սեփականատէրերու քրտանները համաժողովը նոյն որոշումագիրը հրատարակեց :

Պագուի Սակարանը իր որոշմանգրով կը յայտարարէ՝

«Չորս օր խաղաղ քաղաքացիներու կոտորուած եւ քնակարաններու կողոպտումն ու հրդեհ անդադար չառնակուեցաւ իշխանութեան աչքին առաջ, որոնք բացարձակապէս անտարբեր մնացին, եւ ոչ մի միջոց ձեռք չառին համեմատաբար շատ աննշան թիւ կազմող խռովարարները կասեցնելու :

«Պագուի Սակարանի ժողովը անհրաժեշտ կը համարէ յայտարարել թէ տեղական կառավարութիւնը կարող էր այս բոլոր ղեպքերու առաջն առնել : Իր միահամուռ եւ խորին համոզումն է թէ՛ կոտորածներու պատճառը ցեղային, կրօնական կամ դասակարգային չէին : Այդ ղեպքերը պիտի չը պատահէին եթէ ժողովրդի տգէտ մասը աչքին հեղինակութիւն ունեցող աղբիւրներէ զրգուժւած չըլլար :

Պիպիէպաթի Քարեղի գործարաններու էնճիններն ժողովի մը մէջ, ուր 2500 անձեր կային միաձայնութեամբ հետեւեալ որոշումն անցուցին՝ «Մենք Պիպի-էյրաթի Քարեղի գործարաններու վերակացու ու էնճիններն, մեր գործաւորներու հետ տարիներ ընթացքին ունեցած յարաբերութեան վրայ կոթնելով կատարելապէս մեր որոշ համոզումն է թէ՛ Պագուի կոտորածը ոչ մի կերպով չի կարելի ցեղային ատելութեանց վերագրել, թաթարներու ու

Հայերու հետ ունեցած տարիներու ընթացքի թաթարութեամբ՝ եկած ենք այն զրաւակցութեան թէ ո՛ր եւ է մասնաւոր թշնամութիւն մը չի տիրեթ անոնց մէջ :

«Չորս օրուան կոտորած, աննշան պատահարէ յառաջացած, ահաւոր աղէտի մը վերածուեցաւ, անկասկած արտաքին ազդեցութեանց հետեւանքով : Ոչ միայն չափահասներու այլ եւ մանուկներու եւ կանանց ընդհանուր կոտորածի պատասխանատու է կառավարութիւնը, երբ կոտորածը դեռ շատ աննշան էր, քայլ մանգամ չառաւ դադրեցուցնելու : Զինուորներու եւ ոստիկանութեան աչքին առաջ, կոտորած, կողոպտում եւ հրդեհ տեղի ունեցան, եւ անոնք ոչ միայն իրենց ղէնքերը չի գործածեցին, որ ուրիշ ատիթներու անքան յաճախ ու այնքան անողոք կերպով գործածած էին անգէն ժողովրդի դէմ, այլ ոչ մի ջանք չըրին ձերբակալելու եւ զինաթափ ընելու մարդասպանները : Մենք կատարելապէս վստահ ենք որ Պագուի մէջ զոհուած զինուորներու բաւական էին իր ժամանակին աղէտին առաջն առնելու » :

Այս իրականութիւնը միեւնոյն է եւ ուրիշ քաղաքներու մէջ : Զարմանք է որ թաթարները անպատիժ մնալէն քաջալիրուած կրակի ժառանգին քաբիւղի հորերը :

Այս վայրագութեանց պատասխանատուութեան մեղադրանքը զոհերուն վերագրելու պիտի կեղծաւորութիւնն ցոյց կուտայ թէ՛ ինչքան կորեւրի է վստահիլ առական պիւրօկրատիք աղբիւրներէ բղխած կիսապաշտօնական հաղորդագրութեանց :

Թարգմ. Արաֆս

Ն Ա Մ Ա Կ Ս Օ Ֆ Ի Ա Յ Է Ն

 ՍՕՖԻԱՅԻ հայ գաղութը հրապարակային ժողովի մը մէջ որոշեց նախ. Ռոզվէլթի հեռագրով յարգանք յայտնել այն մարդասիրական զգացումներուն,

Արդարեւ, գտնուեցան 15 հատ «մէ-մէլի» պարապ «պոմպա» . նաեւ ջրհորին տակէն գտնուած եւ քարեղի թիթեղեայ տուփի մէջ դրուած տիշմը թնդանօթարան զրկուելով, ըննութիւն կատարուեցաւ եւ հաստատուեցաւ թէ այդ տիղմին մէջ «մէլինիթ» կոչուած պայթուցիկ նիւթը կայ : Մանուկ բացարձակապէս ըսած ըլլալով որ իր կողմէ ընդունուած, մասամբ գրավաճառ եղիայի ու մասամբ խահուէճի նշանի յանձնած եւ մնացածն ալ նոյն ջրհորը նետելով քնաջինջ ըրած նիւթերուն ամէնքը երեսուն քիօյէն աւելի էին. մնացած «մէլինիթ» ին երեսուն քիօն ալ երեսուն հանուեցաւ :

Բերաի Բաբի Տէրոյին տակ խանութի մը մէջ հաստատուած խոհուէճի նշանն ալ բերուելով հարցաքննուեցաւ, սակայն նախապէս ուրացաւ յետոյ Մանուկի հետ դէմ առ դէմ բերուեցան. նաեւ անոր խանութին մէջ կատարուած խուզարկութեամբ, խանութին շուրջ մէկ մէթրի չափ պատի տակը իջնող ծակեր գտնուեցան, որոնց շուրջը զինկոներով պատած էր ուշադրութիւն չը հրաւիրելու համար. նաեւ քովէն երեսուն հանուեցաւ «Պրոչակ» խռովարարական թերթին վերջին թիւի-

րուն պատկերազարդ մէկ օրինակը : Այս պարագաներուն վրայ ըսուեցաւ Նշանի թէ ուրացումի տեղի չէ մնացած . միանգամայն հարցուեցաւ թէ թորգումի աղբարարութեան վրայ Մանուկի կողմէ իրեն յանձնուած պայթուցիկ նիւթերը ինչ ըրած է : Նշան յայտարարեց թէ այդ նիւթերը խանութին մէջ կը պահէր, սակայն եղեռնական արտոքէն մէկ քանի օր ետքը Մանուկի հանդիպելով այդ վերջինը ըսեւ է իրեն թէ այդ նիւթերուն այլեւս պէտք չէ մնացած . հետեւաբար ինք ալ խանութին առջեւ գտնուած ականի ծակէն վար նետեր ու քնաջինջ ըրեր է զայնս, նաեւ թէ «Պրոչակ» խռովարարական ընկերութեան մէջ մտնելով Մանուկի, թորգումի ու Ալլոթի հետ խռովարարական յարաբերութիւններ հաստատուել է, թէ եղեռնական մտադրութիւններէն տեղեկութիւն ունի եւ թէ թորգում ըսեւ է իրեն թէ Կ. Պոլսոյ մէջ երկու հարիւր տեղ քարեղ թափելով հրդեհ առաջ բերելու անիծապարտ մտադրութիւնը ունի, նկատելով որ Նշան տեղեկ է թորգումի այդ աստիճան յեղափոխական նպատակներուն եւ զգացումներուն, հարցաքննութիւնը առաջ տարուեցաւ : Նշան ըսաւ թէ հինգ վեց տարի առաջ Բերայի

Քրէօքէր օթէլին մէջ ոտաղձագործութիւն ըրպչ. պահուն, ինք հինէն յարաբերութիւն ունէր քովիթէին հետ եւ թորգում ալ մասնակցած էր նախկին ղեպքին, ուստի այն ատենէն մնացած ու չը գործածուած մեծ բաքէթ մը հրանիւթ եւ օճառի ձեւով «մէմէլի» ու պարապ տասերկու «պոմպա»ներ թորգումի կողմէ իրեն յանձնուել են եւ օթէլին մէջ ծառայող Պիթլիսի սպասաւոր Ֆրայի գիտութեամբը զայնս պահել է օթէլին չը կողի օտանգուխին տակ, յետոյ թորգումի գիտնութիւն վրայ հրանիւթ պատեալով բաքէթի հետք վերադարձուցեր է : սակայն «պոմպա»ները տակաւին հոն զը գտնուին : Հաւանական նկատուելով որ թորգում մինչեւ հիմա զայնս անկէ վերցուցած ըլլայ, ինչիւրը հարցուեցաւ. Նշանին, որ պատասխանեց թէ եղեռնական արարքէն երեք ամիս առաջ նոյն «պոմպա»ները անկէ հանելու ձեռնարկուել եւ նոյն պահուն օթէլը գտնուող վերոյիշեալ Ֆրայի հետ խորհրդակցութիւն կատարուել է, սակայն նկատելով որ բաւական ժամանակ անցած է եւ «պոմպա»ներուն տեղը շատ մը շինքեր գործած են, որով հանելու համար կարգ մը գործողութիւններ պէտք է կատարել եւ թէ

կրնայ ըլլալ որ օթէլին տէրը՝ գիրմանական հպատակ տիկին Քրէօքէր ալ իմանայ, ետ կեցեր են . հետեւաբար հաստատապէս կը յուսայ թէ «պոմպա»ները հիմա հոն կը գտնուին : Ասոր վրայ Քրէօքէր օթէլին մէջ ըստ օրինի խուզարկութիւն կատարուելով, այդ «պոմպա»ները անկէ հանուելով թնդանօթարան զրկուեցան : Հասկցուելով որ վերոյիշեալ Ֆրայի ծննդավայրը գաղեր է, զայն բերել տալու համար հեռագիր ուղղուեցաւ նոյն տեղը : Մանուկի յարաբերութեանց վրայ ձերբակալուեցան նաեւ գրավաճառ եղիա որ քովիթէին անգամ է եւ հրանիւթերը ընդունած ու պահած է նաեւ «պոմպա»ները Մանուկի յանձնող Միլիտիչի քեռորդին Յովսէփ . քովիթէին անիծապարտ անգամներէն Միլիտիչի եղբայրը Յովհաննէս եւ Երուսաղ. Օհանեսնա Ստոնց հարցաքննութեանց ձեռնարկուեցաւ եւ սակայն պիտի չը յայտնէր հաստատուեցաւ թէ Յովսէփ, Արշակ ու Գարեգին եղեռնական արարքէն ետքը փախած են եւ Մանուկ ալ շատ առաջ մեռած է :

(Շարունակելի)

զոր տաճած է հայ ազգին հան-
գէպ և յայտնել թէ նախա-
դահը նախաձեռնութիւնը պիտի
ունենայ մեր ազգի դատը Լահէյի
խաղաղասիրական Համաժողովին
ներկայացնել :

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐՔԻԱ

Թիւրք հիւքիւմէթի Հունգա-
րիտան վէ Բոսիտան աթլար
ալմագ թէչէպիսինտէ տիր իշ-
պու աթլար թօք չէքմէք իշիւն
տիր :

—Ահմէտ Ֆէյզի բաշա չօգ աս-
քէրլէ սինօրա կէօնտէրիտիկի
վէ Ահմէտիտանա գարըլ մուհա-
հարէպէ հաղըրըլըլ օլտըլըլ րէ-
վայէթ ու իշար օլընիյօր իսէտէ,
տիկէր թարաֆտան, ինկիլիզ վէ
բուս էլիլէրին իտաաաալ իւզրէ,
թիւրք ասքէրի աճէմ թօքրա-
ղընտան կէրի չէքիլմիշ օլտըլըլ
տախի ալըլ պիր թէլէկրաֆլէ
պիտիրիլմիշ օլտըլըլտան, իշպու
մուհարէպէ հաղըրըլըլ օլտ օլ-
սա Պուկարիայա գարըլ օլաճագ
զանն օլընիյօր :

—Թիւրք վէ Մըսըր հիւքիւ-
մէթլէրի պէյնիտէ եէնիտէն
պիր միւնաղաա հուսուլա կէլտի :
Գըրմըլըլ տէնիզ սահիլինտէ Ագ-
ապա իլիմանընա թիւրքլէր էլ
գօյուպտէ օրատան եէմէնէ աս-
քէր վէ մուհիմմաթ նաղլ իթ-
մէք իսթէյօրլար : Մըսըր հիւ-
քիւմէթի իսէ մէղքիւր իլիման
քէնտիսինէ ալիտ օլտըլըլըլ իտ-
տաա իտէրէք, թիւրքլէրին չէ-
քիլմէսինի թալէպ իտէյօր :

—Ղուրպան-պայրամըլ մէսա-
րիֆլէրի իշիւն հիւքիւմէթ Տիւ-
յունը Ումուլմիշ սանտըլընտան
150000 լիրա չէքմիշ տիր :

—Միւշիր Շէմսի բաշանըն
Տրապիզոնտան իւշ թապուր աս-
քէրլէ սինօրա միւթէվէտէիհէն
հարէքթ իթտիկի Սթանպօլ-
տան պա թէլէկրաֆ պիտիրիլի-
յօր :

—Քէզա եէմէն սէր գօմանտա-
նը Ֆէյզի բաշանըն թալէպի իւզ-
րէ, 10.000 ասքէր տահա եէմէ-
նէ եօլլամագ իշիւն գարար վէ-
րիլմիշ տիր, իշպու ասքէրլէրին
էքսէրիսի իզմիր վէ Տրապիզոն
վիւայէթլէրինտէն ալընաճագ :

—Պիր Բուլ չէթասը 150 քի-
շիտէն իպարէթ, էքսէրիսի կի-
րիտի վէ Բլաթաթօրն գօման-
տաալ ալթընտա օլարագ Մանաս-
թըր վիւայէթինէ կիրմիշ տիր,
Բուլ չէթալարըն րէյիսլէրի
պիլ միւշալէրէ, գարար վէրմիշ-
լէր քի «Կուա» թիւֆէնկլէրի եէ-
րինէ Մալլէր գուլլանընլար :
Պիլիմ էրմէնիլէր իսէ չսգմագ-
լըլըլ պիլէ պուլմաալօրլար :

—Սուլթանը Էօլտիւմէք գա-
թընտան տօլայը ճիւնայէթ մահ-
քէմէսինտէն վէրիլէն իլամ թէ-
միլզ մահքէմէսինտէն տախի
թաստիգ օլընտը :

—Էօլիւմէ մահքիւմ օլան ժօրի-
սի Պէլճիգա հիւքիւմէթի չէտի-
տէն իսթէմէքտէ տիր : Պապը Ա-
լի սօն վէ ուղուն պիր նօթա ի-
լէ ժօրիսի թէսլիմ իթմէյէճէկի-
նի գաթիէն պէյան իթտի :

—Սերպօ-պուկար կէօմրիւք
պիրլէյմէսինէ գարըլ թիւրքիա-
նըն իյզահաթ թալէպ իթմէսի-
նէ Պուկարիա հիւքիւմէթի է-
հէմմիլէթ վէրմէտիկիլնի եաղ-
մըլ ըտըգ : Պու տէֆա Պապը Ա-
լի օլ մէսէլէտէն տօլայը Պուկա-
րիա իլէ ուղլաշմագ վէ կէօմրիւք
միւշքիւլաթլարընը հալլ իթմէք
իսթէյօր :

ՐՈՒՍԻԱ

Կ Ա Վ Կ Ա Ս Ի Ա

Կովկասիա էյալէթինտէ էրմէ-
նիլէր իլէ ճէնկլէյմէքտէ վէ մէ-
տէնիլէթէ ու ինսանիլէթէ մու-
ղալիր վահիլիլէր իճրա իտէն
իսլամլար ասըլ Սիւննի միւսլիման
օլմայուպ, Շիա մէղհէպիտէն
տիրլէր : Սիւննիլէր իսէ Շիալա-
լարըն թէչլիքաթընա էհէմմի-
լէթ վէրմէյուպ, էրմէնիլէր իլէ
մուհիպ պուլընմագտա տըրլար :
Պիլ պու մալիւմաթը թէչէքիւ-
րաթլէ տէրճ իտէրիլ :

Շիալարտան 10000 քիշինին
թիֆլիսէ հիւճուլըլ էսնասընտտ
էրմէնի գօմիթէլէրի թիֆլիս
տախիլինտէ պուլընան Սիւննի
միւսլիմանլարա թօգանմաթը-
լարը կիպի Աճէմ թապաաալ օլան
Շիալարըլ տախի մուհաֆաղա ի-
տէրէք, կէօթիւրիպ շահպէնտէր-
իսանէյէ թէսլիմ իթմիլէր, վէ
տիկէր թարաֆտան տըլարտան
հիւճուլմ իտէն Շիա թաթարլա-
րա մուգալմէթլէ անլէրի կէրի
գալըլմըլ տըրլար :

—Վարանցով-Տաշքովըն Ձարա
իշարը իւզրէ, ժէնէրալ Ալիսա-
նով Գվիսիլիտէն պա թէլէկրաֆ
պիտիրմիշ տիր քի, 36 ճէմիլէթ
Ձարըն րէսիմլէրի, Էքօնալար վէ
միլլի պանտէրալար իլէ պէյանը
սատագաթ իթտիլէր : Տիկէրլէրի
տախի ասքէր ամէլիաթը սայէ-
սինտէ իթաաթա կէլմէքտէ օ-
լուպ, օլ ճիվարեա ասալիշ թէ-
մալը իլէ հիւքիւմ իթմէքտէ իմիշ :

Քէզա Կիւրճիստանտան ալը
մաալտա հալաթիլէր ալընտըլըլ
պիտիրմիշ տիր, Միւրալայ Գրի-
լով Կիւրճիստան ասաքիլինի
գօմանտա իտէյօր :

—Բուսիայա իքի միլիաա ֆր.
էօտիւնճ վէրմէք իշիւն Գուէտի
լիօնէ պանգաալընտա պանգէրլէր
իսթիշարէ իտուպ, եալընըլ Տու-
մա թէճէմիլ օլընտըլտան սօն-

րա՝ մէղքիւր մէպլաղը 100 տէ
5 ֆարզլէ վէ 90 գըլմէթի իլէ
վէրիլէպիլէճէկիլնէ պէյանը էֆ-
ֆեար իթտիլէր : Շու հալտէ գա-
նունը էսասի իճրա օլընմաթը-
ճա Բուսիայա էմիլիլէթ իտիլ-
մէյօր :

—Նօվօթիւն Նին պէյանընա
նաղարէն, ժէնէրալ Կրօտելով
Կալկասիայա Ձար-Վէքիլի նասպ
օլընաճագ ըմըլ :

—Ագսաի Շարգտա Ձիթա չէհ-
րի ասըլար վէ իթաաթաթըլ աս-
քէրլէր էլինտէ պուլընարագ,
չըմէնտըլէր, բօթա վէ թէլէ-
կրաֆ սթասիօնլարը տախի զապթ
իթմիշ օլարագ, գօմիթէտէն ի-
զինիլ քիմսէ Բուսիայա ալտէթ
իտէմէյօր : Նատարով, Նիշտէնքօ
վէ Պաթհանով ժէնէրալլար Բու-
սիայա կիթմէք իսթէտիլէր, ֆա-
գաթ ասըլարտան մէնն օլընտը-
լար :

—Պիւթիւն Բուսիաաա միւթէ-
մէքին իսլամլար թարաֆընտան
պիր Գօնկրէ թէճէմիլ իտիլմէ-
սինէ միւսատէ ալմագ իշիւն պիր
հէյէթ Բէթերսպուրկա կիթմիշ
իտի Տիւնքի թէլէկրաֆա պիտա-
էն, տախիլիլէ նաղըլըլ գաբալը
պիր գօնկրէ թէճէմիլսի իշիւն
մէղքիւր հէյէթէ միւսատէ իթ-
միշ տիր :

—Բօլօնիաաա իտարէի ասքէ-
րիլէ իլան օլընտըլը կիպի՝ մահ-
քէմէի ասքէրիլէ հէր կիւն տիւ-
ղիւնալարլէ լէհ իթիլալըլարը
մուհաքէմէ իտուպ, իտամա մահ-
քիւմ էյլէյօր : մահքիւմ օլանլար
տէրհալ գուրշունա թուլթուլի-
յօրլար :

ՄԻԻԹԵՆԷՎԻԷ

Ճարօնիաաա գըլթըլտան պիր
միլիոն գաաար ինսան գըրըլ-
մագտա տըր :

—Էքօ տըլ քարի ժէնէրալ Մօ-
րիս իլէ պիր միւլաղաթընը եա-
ղապ տէմիշ տիր քի, էկէր Մա-
րօք մէսէլէսինտէն Ֆրանսա վէ
Ալմանիա պէյնիտէ մուհարէպէ
զուհէր իտէր իսէ, ինկիլթէրա
ճանիմարգալա ասքէր չըգարուպ,
Ալմանիայա հիւճուլմ իտէճէք :
վէ Բուսիա վէ Ճարօն տախի Ֆը-
րանսայա թարաֆ թուլթաճագ-
լար : Հարպիլէ նաղըլըլ ժէնէ-
րալ Մօրիստէն իյղայաթ թա-
լէպ իթմէսինտէ, ժէնէրալ «Կա-
զէթաճը եանլըլ անլամըլ» տէ-
միշ տիր : Ֆագաթ ասըլ եան-
լըլ հանքըսըլ քիմ պիլիլ :

—Բօմայա կիթմիշ օլան էրմէ-
նի—Կաթուլիկ Պատրիարք Ս. Սա-
պաղեան քէմալը թանթանա իլէ
Բաբաաաա գապուլ օլընմըլ տըր :

—Մարօք հիւքիւմէթի խէվ-
լէթլէրին իթթիֆաթըլըլըլըն-
տան վէ րէգապէթինտէն իսթի-
ֆատէ իթմէք իսթէյուպ, կէօմ-
րիւքլէրի արթըրմագ թէքիլի-

ֆինտէ պուլընտը իսէտէ Գօնկրէ,
տէն գապուլ օլընմաթը :

Քէզա Բօլիս թէչքիլաթընը
տէվլէթլէրէ եախօտ պիր տէվ-
լէթէ իհալէ իթմէք խուպուսըն-
տա Մարոք Սուլթանը գարըլ
տուրաճագ ըմըլ : Սուլթան Բօլիս
իտարէսի քէնտի եէտիլտէ գալ
մագ իւզրէ, Ձուիցէրիալըլ զա-
պիթլէր իսթիմալ իթմէք էֆ-
քեարընտա տըր :

«ԻՐԱՆԻՆՔ» Ի պարտախախտները

Հ. Յով. Բիւրսեան Գաղմիր. — 30
ֆր. ը. գապուլ իթմիշիլ թէչէքիւր :
Աղաւ Աստուրեան Բիթլէյք — Ստա-
ցանք 14 ֆր. ձեր ներկայ 1906 տարւոյ
բաժնեգիրն :

Պօղոս Կարապետեան Կապրօվա. —
Պարտըլ զրկէ. ամօթ է այդ աստիճան
խաբեքայութեամբ վարուիլ ազգ. թեր-
թի մը զէմ. որ միայն իր բաժնե-
գիրներով իր գօյուլթիւնը կը պահէ եւ
չը զիջանիր, ուրիշ շատերու նման,
զրամաշորթութիւններ ընել կամ այլ
եւ այլ բարենպաստակ հաստատութեանց
զրամովը ապրիլ :

Գր. Եգիկեան Բիթլէյք. — Ստացանք
8 ֆր. ը :

Տ. Անդրէաս Թէհրան. — Ստացանք 5
րուպլին. որ արժեք 13 ֆր. : Թերթե-
րը կանոնաւորապէս եւ անընդատ
զրկած ենք ու կը զրկենք. մէկու կէս
ամիսէ ի վեր ձեր թերթ չստանալուն
պատճառը Ռուսիոյ խառնակութիւն-
ներն են, որովհետեւ մենք ալ Կով-
կասի թերթերը չենք ստանար 2 ամի-
սէ ի վեր :

ՀԱՅԱՍՏԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Ընթերցարանիս վարչական ժողովոյ
անդամոց մէկ մասը հրաժարած ըլլա-
լով, նոր վարչութիւն ընտրելու հա-
մար ընդհանուր ժողով պիտի գու-
մարուի յառաջիկայ ուրբաթ գիշեր ազգ.
վարժարանի մէջ : Ուստի կը խնդրուի
ընթերցարանիս բոլոր բաժանորդան-
դամներէ որ հաճին անձամբ ներկայ
լինել :

Առժամ. Դիւան Ընդհ. Ժողովոյ

Ն Ո Ր

Գ Ե Ղ Ո Ւ Ն Ի Ն

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Նախորդներէն աւելի ճոխ պարունա-
կութեամբ լոյս տեսած է Նոր «Գեղու-
նին» կը պարունակէ 100 էն աւելի
գեղատիպ դասական պատկերներ, գե-
րազանցօրէն յաջող է տպագրութիւնը,
հիանալի են բազմազանի պատկերնե-
րը : Պատկերազարդ թերթէ մը թէեւ
չի պահանջուիր գրական գնահատելի
պարունակութիւն մը. սակայն խմ-
բագրութիւնը «Գեղունի» այս բա-
ժնին հարկ եղած ջանքը խնայած չէ.
ներքին եւ արտաքին յօդուածագիրնե-
րը ունին հետաքրքրական գրուած-
ներ :

Գինն է 10 ֆր. 4 րուպլի, 2 տոլար :

Դիւան

Հայկական տպարան

Ս. Ղազար Վահագնի (ԻՏԱԼԻԱ)

Одговорникъ А. Курбетиянъ
печатаетъ а Д. Тодоровъ и С-мо—Варна